ԿԱՐԵՆ Ս. ԹՈԽԱԹՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.
karen.tokhatyan@gmail.com
ID: 0009-0001-3246-9116
DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՓՈՐԱԳԻՐ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԸ*

Բանալի բառեր՝ ակոսանշան, ժայռապատկեր, խորհրդանշան, հնագիտություն, մեհենագիր, գաղափարագիր, «Նշանագիրք իմաստնոց», վարպետանշան, տառանման նշան:

Ներածություն

Հայաստանի ժայռապատկերների բովանդակային բազմազանության մեջ որոշակի է չորս հիմնական ոլորտ՝ բնություն, մարդու առօրյա, արարման արդյունքներ ու ներաշխարհ: Դրանցում առանձնանում է 31 թեմային խումբ. տեղանքի տարր, Երկրագունդ, երկնային լուսատու և երևույթ, օդերևույթ, երկրային երևույթ,

* *Ներկայացվել է 09.I.2024 թ., գրախոսվել է 19.I.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:*

բույս, կենդանիներ, գյուղատնտեսություն, որս, գազանամարտ, մարտարվեստ, մարզում, մրցախաղ, պար, զենք, գործիք, փոխադրամիջոց, շինվածք, կիրառական պատկեր, ուսուցման միջոց, խաղի պարագա, հագուստ, պաշտամունք, երևակայական էակ, ներպատկեր, դիմապատկեր, անորոշ պատկեր, զարդանախշ, խորհրդանշան, տառանման նշան[1]:

Դրանց գործառույթի և իմաստի ըմբռնման համար արդյունավետ է համադրումը մշակույթի հարակից ոլորտների արգասիքներում առկա գաղափարագրերի հետ՝ խեցեղեն, քանդակ, դրվագված իր, կնիք, որմնանկար, մանրանկար, դրամ, վիմագիր, գորգ և այլն:

Կերտման ժամանակաշրջան

Ժայռապատկերը Հայաստանի պատկերագրական մշակույթում հնագույնն է: Ժայռապատկերումը սկզբնավորվել է Ք.ա. VII-V հազ. միջակայքում՝ նստակեցության և երկրագործության անցնելուն համընթաց և հաջորդ՝ ավելի կատարյալ գրահամակարգերի լայն կիրառման հետևանքով հետզհետե անկում ապրել[2]:

Հորինվածքների ու ոճերի մի մասը բնական շարու-

---

[1] **Թոխաթյան.** 2020, 3-4:

[2] Հաղորդակցական նոր ձևերը՝ մեհենագիրը, սեպագիրն ու այբուբենն ավելի հարմար են, արագ ու միարժեք են գրանցում ու փոխանցում տեղեկությունը, առավել պարզ են և մատչելի, թեև՝ պակաս արտահայտիչ և պատկերավոր:

նակություն է գտել հայ մշակույթի բազմաթիվ ոլորտներում: Ժայռապատկերման ավանդույթների վերապրուկային դրսևորումներ՝ հնագույն պատկերի ոճով փորագրություններ ու որմնանկարներ կան բրոնզ-երկաթի դարերի, սեպագրական փուլի, անտիկ ու միջնադարյան աշխարհիկ ու հոգևոր կառույցների սալաքարերին ու պատերին, ճգնավորական անձավներում: Ժայռանկարի ձևիմաստային տարրերը նույնակերպ, հաճախ նույնախորհուրդ դրսևորվել են ըստ տեսքի, ոճի, տեխնիկայի և արտահայտած իմաստի, շարունակաբար լրացվելով նորանոր նշաններով: Միջնադարյան նշանագրերին հաճախ ակնառու նմանությունը կարող է վկայել, որ փորագիր նշանները ստեղծվել և հնում ևս կիրառվել են որպես գաղափարագիր /աղ. 8/:

Խորհրդանշան

Գեղամա, Վայքի, Սյունիքի և Արցախի լեռների, Արագածի, Նավասարի ու Շատախի մոտ 10 հազար կոթողների գրեթե մեկ տասներորդը մեկուսի նշաններ են /աղ. 1/: Ավելին, շատ հաճախ հաճախ դրոշմվել են նաև պարզ, ըմբռնելի տեսարաններում (կենդանի, որս, մարտ, պար, վար): Բնական է համարել, որ դրանք որոշակի իմաստ ու դեր են ունեցել, արվել են սյուժեի լրացման, ճշգրտման, ևս մի կամ այլ իմաստ, նրբերանգ ավելացնելու, շեշտելու համար: Հարկ է ընդունել նշանի գաղափարագիր, որոշիչ (դետերմինատիվ) լինելը: Սա

կարևոր է ժայռապատկերի իմաստի պարզաբանման համար:

Սրանք հիմնականում պարզ նշաններ են՝ կետա-խումբ, ուղիղ, կոր, անկյունիկ, կեռիկ, բեկյալ, օղակ, պարույր, ալիք, խաչ, սլաք, ճառագայթներ, 8, տերև, ճյուղ, սեպ, եռանկյունի, քառակուսի և այլն, որոնց հա-մակցումներով կազմվել են բարդերը: Նշանը դրոշմված է որոշակի իրողություն (էակ, իր, երևույթ) ցուցադրող ժայռապատկերի ընդհանուր դաշտում (այս դեպքում հաճախ մեկուսի է, փոքր-ինչ առանձնակի): Թեև սա-կավ, բայց հանդիպում է լոկ մեկ նշանով ժայռապատ-կեր: Այս երկու՝ մեկուսի և մենանշանի եղանակով, ըստ երևույթին, առավել շեշտվել է տվյալ նշանի կարևո-րությունը: Կան նույնիսկ միայն նշաններից կազմված հորինվածքներ՝ առանց որևէ կոնկրետ, իրական պատ-կերի:

Հնադարի մարդու պատկերային «լեզուն» պարզ էր, համընդունելի, պատկերի և նշանի համակցությամբ ար-տահայտվող ասելիքը միանշանակ էր՝ անկախ բովան-դակային և ոճական տարբերակներից ու նրբերանգնե-րից: Աշխարհի տարբեր ծագերում և բոլոր ժամանակնե-րում մերձ են «պատկերալեզվի» և «պատկերախոսքի» մտածողական ու հոգեբանական հենքերը, ուստի և միտքն արտահայտվել է գրեթե նույն պատկերակերպով: Մտածածն ու զգացածը պատկերելով, կերպավորելով, պատկեր դարձնելով ներկայացնելու, բացատրելու և

փոխանցելու իմաստն ուղղակիորեն ու լիարժեք բացահայտվում է հայերեն պատկերացում բառի կազմությամբ[3]:

Ժայռապատկերներում կան նշաններ և նկարվածքներ, որոնք հավանաբար արտացոլում են դիրքա-շարժումային (ժեստերի) լեզվի տարրեր: Խոսքի գրանցման այս պատկերային ձևը ժամանակի հաղորդակցության միջոցներից էր: Խորհրդանշանն ընդհանրական է և հնարավորինս միարժեք ընկալելի, ուստի վաղ անցյալում միջէթնիկ շփումների միջոց է եղել իր համամարդկային, վերէթնիկ բնույթի շնորհիվ: Ինչպես այլուրեք, գծայնացման արդյունքում նկարը հետզհետե վերածվել է պատկերագրի, հետագայում՝ նաև գրանշանի: Ուստի, ժայռարվեստի այս ենթաշերտի ուսումնասիրությունն ունակ է լույս սփռելու մտածողության, խոսքի և գրի ծագման, դրանց հաջորդայնության ու համաժամանակության խնդիրներում:

Տառանման նշան

Սա առանձնանում է Հայաստանի ժայռափոր նշանների ծիրում: Այն իրական տառ՝ գրավոր խոսքի կազմատարր և հնչույթի գրառման նշան չէ, որով բառ է կազմ-

[3] «Պատկերացում՝ ըմբռնուածին թանձրացեալ կամ մտաւոր վերարտադրութիւնը, պատկերանալը, պատկերացնելը» (**Տէր Խաչատուրեան.** 1992, 679): «Պատկերել՝ պատկերացնել, արտահայտել, արտացոլել, նկարագրել, պատկերագրել, գծել, ներկայացնել, բացատրել» (**Սուքիասյան.** 1967, 539):

վում[4]: Հազվադեպ է 2-3 կից տառանմանով ժայռանկարը, այսպիսի «տառակապակցությունը» լեզվի որևէ իմաստակիր միավոր, բառիմաստ չունի՝ չի «ընթերցվում»: Ընդսմին, հարկ է նշել, որ թեև քիչ են տառանմանների համակցություն կրող առանձնակի քարերը, սակայն, միանգամայն հավանական է հարևան ժայռապատկերների իմաստակից լինելը, հատկապես՝ եթե դրանք սոսկ նշաններով են կազմված: Նմանություն կա գրային մի շարք համակարգերի նշանների, հատկապես՝ հնչյուն ու վանկ արտահայտող խեթալուվիական մեհենագրերի հետ /աղ. 7/: Մեր ժայռանկարներում կա Մաշտոցյան (հայոց, վրաց, աղվանից) /աղ. 2/, փյունիկյան /աղ. 3/, հարավսեմական, արամեական, պալմիրյան, հունական /աղ. 4/, լատինական, միջին-պարսկական և այլ այբուբենների տառերին նմանվող ավելի քան 100 նշանաձև[5]:

---

[4] Այբուբենում գրի միավորը տառն է. «գիրը տառի մարմնավորումն է», ըստ Մովսես Քերթողի՝ «Սկիզբն արարեալ զտառէ, պատմէ զգրոյ» (**Մովսէս Քերթող**. 2005, 1196): Ոչ այբբենական համակարգերում գրի միավորը վանկանշանն է, մեհենագիրը և գաղափարագիրը:

[5] Տառաձևի, գրի և ժայռապատկերի աղերսների շուրջ տե՛ս **Պետրոսյան.** 1998, 22-23: **Պետրոսյան.** 2005, 11-12, 22-24, 28-30: **Սարգսյան.** 1999, 76-131, 269, 321: **Թոխաթեան.** 2003, 79-81, 90-96: **Թոխաթյան.** 2006, 56: **Թոխաթյան.** 2015, 371, 377: **Թոխաթյան.** 2016, 192: **Մովսիսյան.** 1998, 52-54: **Մովսիսյան.** 2003, 9-21: **Մովսիսյան.** 2021, 95-100, նկ. 4-6: **Tokhatyan.** 2015, 192. **Tokhatyan.** 2020, 139. **Tokhatyan.** 2022, 25, 27. Դրանց անդրադարձել է նաև չեխ ժայռապատկերաբան Մ. Կշիցան (**Ksica.** 1984, 269. **Թոխաթյան.** 2017, 148):

Թեև տառանման նշանները դրսևորված են տարբեր ձևով, ոճով ու դիրքով, սակայն խիստ կենտրոնացած են տվյալ նշանի միջին տեսքի շուրջ, հաճախ նկատելի են անցումային ու զարգընթացային շարքեր, «ձեռագրական» տարբերակներ /աղ. 5/: Մի մասը կենտրոնացած են նաև որևէ առարկայի, կառուցվածքի, երևույթի, մարմնի մասի, ձևի, դիրքի և վիճակի միջին պատկերակերպի շուրջ, այսինքն՝ տառանման նշանը կարող է լինել այդ իրողության գծագիր, սխեմային արտահայտությունը:

Ակոսանշան

Հայկական լեռնաշխարհի մենաշնորհ այս կոթողը նշանագրի հավանական տեսակ է: Հիմնականում բրոնզ-երկաթի դարերի ամրոցներում գտնվող 0.7-3 մ չափի, 4-30 սմ խորության և 6-30 սմ լայնության փորվածք է գետնատարած քարամակերեսի և մեծ ժայռաբեկորի վրա[6]: Ավելի քան 25 հնավայրում արդ հայտնի է մոտ 150 հատ: Գտնվում են հետևյալ վայրերում. ՀՀ տարածքում՝ Հոռոմ, Մեծամոր, Դաշտադեմ, Վանի ավազանում՝ Արտամետ, Հայկաբերդ, Վանի միջնաբերդ,

[6] Հայաստանում սրան անդրադարձել է Ա. Մովսիսյանը, կոչելով այն հսկայանշան (**Մովսիսյան.** 2003, 206-211: **Մովսիսյան.** 2021, 195-197): Ակոսանշան եզրն ավելի բնորոշ է կերտվածքին, քանի որ իբրև հսկայանշան կարող է ընկալվել նաև ամեն մի խոշոր չափի պատկեր, օր.՝ գունավոր ժայռանկարը:

Փանզ, Վերին Անձավ, Գայթիս, Օրորան, Դատվան, Արածանիի վերնագավառում (Բագրեւանդ)՝ Մուշյան, Վարաժնունիքի հյուսիսում՝ Հերթ (Խըրթ, Կերտ), Արաքսի վերին հոսանքում՝ Արուճագրակ, Բագայառիճ (Դերջան՝ Բարձր Հայք), Պարտիզակ և Մեծկերտ (Բալահովիտ՝ Ծոփք), Խաղտյաց լեռնաշղթայի հյուսիսարևմտյան լանջերին՝ Արդիճ, Արարատի հյուսիս-արևմտյան ստորոտում՝ Մաղարաբլուր (Մասեացոտն՝ Այրարատ), Գայլատու լճից հյուսիս-արևելք՝ Վարդամարգ (Ճակատք՝ Այրարատ) լճից հարավ-արևելք՝ Առուն (Կոգովիտ՝ Այրարատ), Կապուտան լճի արևմտյան ափին՝ Զամբիլ (Թրաբի՝ Պարսկահայք), Կապուտանից հյուսիս՝ Բաստամ (Ճուարշ-Ռոտ՝ Վասպուրական) և այլն: Մի մասը նման են ժայռապատկերների աստղագիտական իմաստակրությամբ նշաններին /աղ. 6/:

Վարպետանշան

Սա առավել ուղղակի է առնչվում նշանագրին: Դեռևս IV դ. սկիզբ առած այս վիմագիր նշանների մասին Ս. Բարխուդարյանը գրել է, որ դրանք բաժանվում են «երկու հիմնական խմբի. տառային և զանազան երկրաչափական» և, այբբենական տառերի համեմատ «ավելի շատ են այնպիսիները, որոնք կարող են համեմատվել մեր ձեռագիր մատյաններից հայտնի «նշանագրերի» և նույնիսկ հայ գրերից ժամանակով ավելի հին, զանա-

զան վայրերից հայտնի անծանոթ գրերի կամ նշանների հետ»[7]: Նշանի կրկնվելն իրարից հեռու կառույցներում կարող է վկայել նույն քարգործ վարպետի աշխատանքի, կամ իմաստի ու ոճի շարունակման մասին, նպաստել անձի նույնացմանը, դրանով իսկ՝ հուշարձանի թվագրմանը: Նույնը հնարավոր է նաև ոճով նման ժայռապատկերների պարագայում:

Ս. Մնացականյանը կարևորել է դրանց հայատառ լինելը: Նա նկատել է, որ այդ հանգամանքը վկայում է կառույցի ազգության և մեզանում «այլ երկրներից վարպետներ հրավիրելու սովորության բացակայության մասին: …Որ նման բազմաթիվ նշանագրեր են հանդիպում Հայաստանի սահմաններից դուրս, ինքնին արդեն վկայում է հայ վարպետների շինարարական գործունեության մասին նաև հարևան երկրներում, …որն առանձնակի ծավալ է ստանում XI–XIV դարերում»[8]:

Ա. Մովսիսյանն ըստ լեզվաբան Ի. Գելբի տվյալների, առավել վաղ փուլին է առնչել դրանք: Բիայնական խեցեղենի ինը նշան նա դիտարկել է որպես «վարպետի նշան՝ ցույց տալու համար աշխատանքի հեղինակին» և հավելել՝ «Հայկական շինությունների պատերին պահպանվել են մեծ թվով վարպետանշաններ, որոնց մի մասը նույնությամբ առկա է նաև Վանի թագավորության

[7] **Բարխուդարյան.** 1963, 213:

[8] **Մնացականյան.** 1982, 11-12:

ժամանակաշրջանում»[9]: Նրան հղելով, Գ. Գրիգորյանը նշել է, որ «քարգործ վարպետների նշաններ կիրառվել են նաև վաղնջական ժամանակներում և ավանդաբար դրանք փոխանցվել են հետագա դարերին»[10]:

Ուսումնասիրման պատմություն

Հ. Մարտիրոսյանը հնադարյան, բրոնզեդարյան, բիայնական և միջնադարյան նշանագրերը համարել է տեղական պատկերագրության ժառանգական շղթայի օղակներ: Նշել է, որ «հետագա դարերում գրչության այդ ձևերը պարզունակ համակարգեր են կազմում և ընկնում ուրարտական հիերոգլիֆիկ գրության հիմքում, որն արմատով իսկ բնիկ Հայաստանյան երևույթ է դառնում: Չնայած սեպագրի լայն կիրառմանը, գաղափարագրությունը պահպանվում է և օգտագործվում վաղ հայկական հեթանոսական մեհյաններում: Գաղափարագրության հարատևման պատճառը Հայաստանում պետք է փնտրել նախնադարյան բնապաշտական գաղափարաբանության առողջ ու կենսունակ երակների, Հայաստանի մշակութային կյանքի անընդմեջ ու վերընթաց ավանդական զարգացման մեջ»[11]:

Հարատևած նշանների մի մասն ախտարական,

---

[9] **Մովսիսյան.** 1998, 19-21, նկ. 10: **Մովսիսյան.** 2003, 45-46, աղ. 9: **Մովսիսյան.** 2021,183, աղ. 14:

[10] **Գրիգորյան.** 2000, 89:

[11] **Մարտիրոսյան.** 1973, 69, աղ. XXIII:

աստղագիտական մեհենագրեր են: Ժայռապատկերներում արտացոլված՝ նախնյաց տիեզերաբանական գիտելիքի մասին Հ. Մարտիրոսյանը նշել է. «Նշանագրերի մի զգալի մասը վերաբերում է ժամանակի կոսմիկական հասկացողություններին, աստղահմայությանը և ցույց է տալիս աստղագիտության առաջին, բայց լուրջ քայլերը»[12]: Ձեռագրերում ու հնատիպ գրքերում կան աստղագիտական իմաստներով բազմաթիվ գաղափարագրեր՝ *Աղեղնաւոր, ամառ, Աշխարհ, աշուն, առաւօտ, Առիւծ, աստղ, Արեգակն, արեւելք, արեւմուտք, Արուսեակ, գարուն, Եկաւոր, Երկիր, Երկինք, լրումն, Լուսին, Խոյն, հարաւ, ծմեռ, Ջրհոս, վիշապ, Ցուլն, փայլակն* և այլն[13]:

Ժայռապատկերների լայնածավալ հայտնաբերումների հիմամբ Ա. Աբրահամյանը եզրակացրել է, որ նախամաշտոցյան «Հայաստանում սիմվոլիկ նշաններով պրիմիտիվ ժայռագրություն է գոյություն ունեցել դեռևս վաղ նախնադարում»[14]: Ա. Մովսիսյանը ևս ժայռանկարը դիտարկել է որպես գրի մինչայբբենական փուլ, առնչելով բիայնական մեհենագրերին և միջնադարյան նշանագրերին[15]:

Քրիստոնեության օրոք հնագույն գաղափարագրերի

---

[12] **Մարտիրոսյան.** 1973, 70:

[13] Նման գաղափարագրերի 40 օրինակ տե՛ս **Թումանյան.** 1964, 362-364: **Մարտիրոսյան.** 1973, 68, աղ. XXIII:

[14] **Աբրահամյան.** 1982, 43:

[15] **Մովսիսյան.** 1998, 27, 52-57: **Մովսիսյան.** 2003, 9, 17, 20, 227: **Մովսիսյան.** 2021, 77-83, 87-90, 95-100, նկ. 4-6:

հարատևման դրսևորում են ձեռագրերի «Նշանագիրք իմաստնոց» («Նշանագիր անուանց», «Այսոքիկ են գրոյս նշանագիրքն», «Այս է նշանագրերն Հայոց ազգի», «Վասն պատուագրաց» և այլ կերպ կոչված) ցանկերը[16]՝ յուրաքանչյուր նշանի բացատրությամբ /աղ. 6/:

Ժառանգության հետազոտությունը սկիզբ առավ 1730 թ., երբ Մ. Սեբաստացին հրատարակեց 46 նշանների մի ցանկ: Մ. Չամչյանցը դրանք այսպես բնորոշեց. «այն գիրք գուցէ չէին յատուկ տառք, այլ՝ նշանագիրք ինչ, որ հնարել էին փոխանակ ամբողջ բառից. զոր կան և այժմ ‘ի հին ձեռագիրս այդպիսիք աւելի քան զերկու հարիւր»[17]: Ուսումնասիրությունը շարունակեցին Մ. Էմինը (84 նշան), Պ. Մարտինը (257 նշան), Գ. Սրվանձտյանցը (120 նշան), Տ. Պալյանը (511 նշան), Ի. Սրապյանը (25 նշան) և այլք[18]: Ամենամեծ ժողովածուն կազմել է Հ. Աճառյանը, քննել է նաև դրանց նախամաշտոցյան ծագման խնդիրը և իր դիտարկած 509 նշանագրերից 32-ը համարել բուն պատկերագիր՝ հետմեսրոպյան շրջանում ստեղծված[19]:

---

[16] **Աբրահամյան.** 1959, 139: **Աբրահամյան.** 1973, 201: **Աբրահամյան.** 1982, 38-43, 144-145:

[17] **Չամչեանց.** 1784, 761:

[18] Առավել մանրամասն տե՛ս **Աճառյան.** 1928, 23-30: **Աբրահամյան.** 1959, 139-142: **Աբրահամյան.** 1973, 201-202: **Մովսիսյան.** 2021, 181-182:

[19] **Աճառյան.** 1928, 24-59 և հավելված: Այդ 509-ից 332-ը համարել է մաշտոցյան տառաձևերից ստեղծված, 124-ը՝ անհայտ ծագման, 21-ը օտար ծագումով: Նշանների ցանկը զետեղվել է գրքի հավելվածում:

«Նշանագիրք իմաստնոց»-ի ուսումնասիրման ասպարեզում մեծ ներդրում ունի Ա. Աբրահամյանը: Քննելով 49 ձեռագիր, նա ցույց է տվել, որ ձեռագրերի՝ «Երզնկայի» խմբի նշանագրերի մեծ մասը (մոտ 180-ը) կապ չունի մեսրոպյան այբուբենի հետ և բազմաթիվ զուգահեռներ ունի Հին աշխարհի այլ գրային համակարգերում[20]:

Բրոնզի դարից միջնադար կիրառված նշանագրերի և ժայռափորագիր նշանների ծավալուն համադրումներ են արել Լ. Բարսեղյանը[21], Հ. Մարտիրոսյանը[22] և Ա. Մովսիսյանը[23]: Նախամեսրոպյան գրի և հմայագրերի որոշ աղերսների անդրադարձել է Լ. Խաչիկյանը[24]:

Եզրակացություններ

Ժայռապատկերն իմաստաբանությամբ և նկարվածքով աղերսվում է հայ մշակույթի մյուս ոլորտների արգասիքներին, որոնց միահյուս է մշտական թեմայով՝ կան հնագույն ու կայուն մոտիվներ, ընդհանուր-միավորիչ թեմային հաստատուններ: Այս շարքում են հնագույն փորագիր խորհրդանշանները, որոնք իմաստի վերծանման

---

[20] **Աբրահամյան.** 1959, 144-173: **Աբրահամյան.** 1973, 204-243:

[21] **Բարսեգյան.** 1961, 238-244. **Բարսեգյան.** 1967, 85-90, նկ. 1-3. **Բարսեղյան.** 1964, 48-51, նկ. 2:

[22] **Մարտիրոսյան, Իսրայելյան.** 1971, 22: **Մարտիրոսյան.** 1973, 7-11: **Մարտիրոսյան.** 1978, 79-89, աղ. IV-VIII: **Մարտիրոսյան.** 1981, 70-80:

[23] **Մովսիսյան.** 2003, 8-69, 200-212: **Մովսիսյան.** 2021, 181-186 և հավելված:

[24] **Խաչիկյան.** 1963, 157:

դեպքում վերածվում են գաղափարագրի և ունակ են լուսաբանելու նախնադարի մտածողական դաշտի բազմաթիվ նրբերանգներ:

Առկա է կարևորագույն մի հանգամանք ևս՝ տեղածին, տևական և ավանդական այս մշակութային ոլորտի անընդհատությունը, անցումայնությունն ու ժառանգորդայնությունը: Կերպարվեստի հնագույն այս շերտը՝ ժայռապատկերը, գրեթե բոլոր թեմաներով, իմաստաբանությամբ, փորագրման ավանդույթներով ու տեխնիկայով, տեսակներով և ոճերով հարատևել է ժամանակի հորձանուտում:

Ժայռարվեստի և մշակույթի մյուս ճյուղերի շարունակական լինելը և տարբեր փուլերի արարումների ընդհանրությունն իր բնապատմական տարածքում հայոց հարակայության ևս մի հավաստիք են[25]:

Հայաստանի խորհրդանշանակիր ժայռապատկերներն աշխարհի ճանաչման ու մեկնաբանման վաղագույն բնափիլիսոփայական մտածողության դրսևորումներ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ. 1959, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, «Հայպետհրատ», 415 էջ:

Աբրահամյան Ա. Գ. 1973, Հայոց գիր և գրչություն,

[25] **Թոխաթյան.** 2006, 53-58: **Tokhatyan.** 2015, 205. **Tokhatyan.** 2020, 154. **Tokhatyan.** 2022, 31:

Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 373 էջ:

Աբրահամյան Ա. Գ. 1982, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, «Հայաստան» հրատ., 150 էջ:

Աճառեան Հր. 1928, Հայոց գրերը, Վիեննա, «Մխիթարեան տպ.», 501 էջ, հավելված:

Բարխուդարյան Ս. Գ. 1963, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ» հրատ., 381 էջ (91 լուս.):

Բարսեղյան Լ. 1964, Հայոց գիրը Մաշտոցից շատ առաջ, «Գիտություն և տեխնիկա», Երևան, № 3, էջ 48-51:

Թոխաթեան Կ. 2003, Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ, «Բազմավէպ», Վենետիկ - Ս. Ղազար, ՃԿԱ տարի (CLXI), № 1-4, էջ 44-100:

Թոխաթյան Կ. 2006, Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհում հայոց հարակայության վկաներ, «Հարք» հայագիտական հանդես, Երևան, № 1, էջ 52-59:

Թոխաթյան Կ. 2015, Հայաստանի ժայռապատկերները նախնադարյան արվեստի համատեքստում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 2, էջ 368-381:

Թոխաթյան Կ. 2016, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը, «Պատմաբանասիրական հանդես» Երևան, № 2, էջ 180-198:

Թոխաթյան Կ. 2017, Ժայռապատկերաբան Միրոսլավ Կշիցան Հայաստանում, «Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» (միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, «ՊԻ» հրատ., էջ 146-154:

Թոխաթյան Կ. 2020, Գործիքը, փոխադրամիջոցը և կառուցվածքը Հայաստանի ժայռապատկերներում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, № 21, էջ 3-20:

Թումանյան Բ. 1964, Հայ աստղագիտության պատմություն (հնագույն ժամանակներից մինչև XIX դ. սկիզբ), Երևան, «Միտք», 414 էջ:

Խաչիկյան Լ. Ս. 1963, Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, № 4, էջ 145-158:

Մարտիրոսյան Հ. Ա. 1970, Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 9, էջ 54-70:

Մարտիրոսյան Հ. Ա. 1973, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 82 էջ, 23 աղ.:

Մարտիրոսյան Հ. Ա. 1978, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, «Սովետական գրող» հրատ., 206 էջ, 40 աղ., 127 նկ.:

Մարտիրոսյան Հ. Ա. 1981, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 11, պր. III, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 128 էջ, 40 նկ., 81 աղ.:

Մարտիրոսյան Հ. Ա., **Իսրայելյան Հ. Ռ.** 1971, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 6, պր. II, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 66 էջ, 333 նկ.:

Մնացականյան Ս. Խ. 1982, Վարպետաց վարպետներ, Մանուել. Տրդատ. Մոմիկ, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 180 էջ, 28 թերթ նկ.:

Մովսէս Քերթող 2005, Մեկնութիւն քերականին, Մատենագիրք Հայոց, հ. Ե, Անթիլիաս, էջ 1191-1208:

Մովսիսյան Ա. 1998, Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Երևան, «Գիտություն», 107 էջ, 35 աղ.:

Մովսիսյան Ա. 2003, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 398 էջ:

Մովսիսյան Ա. 2021, Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան, «Զանգակ» հրատ., 448 էջ:

Չամչեանց Մ. 1784, Պատմութիւն Հայոց, Վենէտիկ, «Ի տպ. Պետրոսի Վաղվազեանց», հ. Ա, 803 էջ:

Պետրոսյան Ս. 1998, Պատմում են ժայռապատկերները, «Գիտություն և տեխնիկա», Երևան, № 1-3, էջ 18-23:

Պետրոսյան Ս. 2005, Հայկական ժայռապատկերներ, Երևան, «Եգեա» հրատ., 244 էջ, 648 նկ.:

Սարգսյան Վ. 1999, Հայոց գրերի ծագումը (ներքին վերականգնում), Երևան, «ԵՊՀ» հրատ., 336 էջ:

Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 1339 էջ:

Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. Բ, Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք» հրատ., 1208 էջ:

Барсегян Л. А. 1961, Об одной урартской иероглифической надписи, «Պատմա-բանասիրական հանդես», № 3-4, с. 238-244.

Барсегян Л. А. 1967, Об урартской иероглифической

письменности, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, с. 85-90.

Ksica M. 1984, Vypravy za pravekym umenim, Bratislava, “Svetom”, 312 p.

Tokhatyan K. 2015, Rock carvings of Armenia, Fundamental Armenology, № 2, p. 184-205 /<fundamentalarmenology.am/datas–/pdfs/180.pdf>.

Tokhatyan K. 2020, Petroglyphs of Armenia along the Great Silk Road, Studies on Cultures along the Silk Roads, Budapest, vol. 2, p. 129-154.

Tokhatyan K. 2022, Petroglyphs in Armenian Highland, Historical-cultural Heritage of Armenia, Yerevan, “Scientific Research Center of Historical and Cultural Heritage”, p. 21-31.

Карен С. Тохатян, *Институт истории НАН РА, к.и.н.,*
Наскальные изображения Армении и средневековые идеограммы

Резюме

В армянском наскальном искусстве выделяются четыре основные сферы: природа, повседневная жизнь человека, плоды его творчества и внутренний мир. Их богатое многообразие разделено мной на 31 тематическую группу: элементы местности, Земля, небесные светила, небесные, атмосферные и земные явления, растения, животные, земледелие, охота, борьба животных, сражения, спорт, соревнования, танцы, оружие, инструменты, транспортные средства, конструкции, прикладные изображения, средства обучения, игровые пособия, одежда, культ, мифические существа, анатомия существ, портрет, неопределенное изображение, орнамент, символы, буквообразные знаки.

Наскальное искусство в Армении зародилось в VII-V тысячелетиях до н.э. и постепенно было заменено более развитыми системами письма. Некоторые древние композиции и стили нашли естественное продолжение в других сферах армянской культуры. Традиции петроглифов наблюдаются в барельефах и фресках раннего железного века и клинописного периода, античных и средневековых сооружениях и пещерах. Навыки резьбы сохранились в конструкциях, скульптуре, клинописи и лапидарных надписях. Очевидное сходство со средневековыми пиктограммами может свидетельствовать о том, что наскальные знаки применялись в качестве идеограмм с давних времен.

Почти одна десятая часть из 10 тысяч известных петроглифов – отдельные, изолированные символы. Такой знак часто запечатлен и в простых, обыденных сценах, и следует воспринимать его как идеограмму, детерминатив. Среди разнообразия петроглифов выделяются буквоподобные знаки, но они не алфавитные буквы. Сходства наблюдаются с рядом систем письма, особенно с хеттско-лувийскими иероглифами. В наскальных рисунках Армении встречается более чем 100 видов знаков, похожих на буквы маштоцовского и других алфавитов.

Общепонятный символ в древности служил средством межэтнического общения в силу своей универсальной, надэтнической сущности. Как и везде, в результате линеаризации он превратился в развитую пиктограмму, а на более поздних этапах – в букву. Поэтому изучение этого субстрата петроглифов может пролить свет на проблемы происхождения человеческого мышления, речи и письма, их последовательности и синхронности.

Ключевые слова: знаки-борозды, петроглиф, символ, археология, иероглиф, идеограмма, знаки мудрости, знак мастера, буквоподобные знаки.

Karen S. Tokhatyan, *Institute of History of NAS RA, PhD in History,* **Rock-carved Signs of Armenia and the Medieval Ideograms**

Summary

In Armenian rock art, four main areas are distinguished: nature, everyday life, results of human creation and the inner world. I've organized their rich diversityinto 31 thematic groups: terrain elements, the Earth, heavenly luminaries, celestial, atmospheric and terrestrial phenomena, plants, animals, agriculture, hunting, animal fighting, battles, sports, competitions, dance, weapons, instruments, transportation means, constructions, applied images, learning tools, play aids, garment, cult, mythical creatures, anatomy of creatures, portrait, uncertain image, ornament, symbols, letter-like signs.

Rock art in Armenia originated in the 7th - 5th millennia BCE and was gradually replaced by more developed writing systems. Certain ancient compositions and styles naturally continued in other areas of Armenian culture. The traditions of petroglyphs are observed in bas-reliefs and frescoes of the early Iron Age and Cuneiform periods, as well as in ancient and medieval structures and caves. The skills of carving have been preserved in constructions, sculpture, cuneiform and lapidary inscriptions. The obvious similarity with medieval pictograms may indicate that rock-carved signs served as ideograms since ancient times.

Nearly one tenth of the 10 thousand known petroglyphs are separate, isolated symbols. Such a sign is often depicted in simple, ordinary scenes, and it should be perceived as an ideogram, determinative. Among the variety of petroglyphs, letter-like signs stand out, but they are not alphabetic letters. Similarities are observed with a number of writing systems, especially with Hittite-Luwian hieroglyphs. In the rock carvings of Armenia there are more than 100 types of signs similar to the letters of Mashtots and other alphabets.

symbol in ancient times served as a means of interethnic communication due to its universal, supra-ethnic nature. As elsewhere, in the result of linearization it turned into a developed pictogram, and at later stages – into a letter. Therefore, the study of this substratum of petroglyphs can shed light on the problems of the origin of human thinking, speech and writing, of their sequence and synchronicity.

Key words: furrow-sign, petroglyph, symbol, archaeology, hieroglyph, ideogram, wisdom ideograms, craftsign, letter-like sign.

Աղ. 1 Ժայռապատկերների խորհրդանշաններ

Աղ. 2 Տառանման նշաններ (հայկական այբուբեն)



Աղ. 3 Տառանման նշաններ (փյունիկյան այբուբեն)

Աղ. 4 Տառանման նշաններ (հունական այբուբեն)



Աղ. 5 Տառանման նշանների տարբերակներ

Աղ. 6 Ակոսանշաններ



Աղ. 7 Խեթա-լուվիական գրանշանների բառային իմաստը,
Ք.ա. XIV-VII դդ.



Աղ. 8 Միջնադարյան ձեռագրերի գաղափարագրեր